ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 213-Ա «24» փետրվարի 2021 թ.

ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄ ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N 246-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման 13-րդ կետի պահանջներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացի իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչությանը՝ պարբերաբար իրականացնել թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացի մոնիթորինգ և արդյունքները տարեկան կտրվածքով ներկայացնել նախարարին:

4. Սահմանել, որ սույն հրամանի գործողությունը տարածվում է այն թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների վրա, որոնց

հիմնադրի լիազորած պետական մարմինը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

5. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված դահլիճների վարձակալության գումարների չափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2007 թվականի օգոստոսի 6-ի N433-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 246-Ա հրամանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանով սահմանված Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի իրականացման համար տրամադրվող մեկ օրվա վարձավճարի մեծությունների,

2) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանով սահմանված Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի իրականացման համար տրամադրվող մեկ օրվա վարձավճարի մեծությունները ուժը կորցրած ճանաչել 2021 թվականի ապրիլի 1-ից:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված N 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի փետրվարի 24-ի N213-Ա հրամանի

ԿԱՐԳ
ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄ ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են այն թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացի կազմակերպման իրավահարաբերությունները, որոնց հիմնադրի լիազորած պետական մարմինը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

2. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքներում սույն կարգին համաձայն կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար երրորդ անձանց մատուցել ծառայություններ՝ նկատի ունենալով, որ իրեն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքով սույն կարգին համաձայն կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար երրորդ անձանց մատուցվող ծառայությունները՝

1) պետք է համահունչ լինեն կազմակերպության կանոնադրական նպատակներին,

2) չպետք է խաթարեն կազմակերպության բնականոն գործունեությունը,

3) չպետք խախտեն կազմակերպության խաղացանկը կամ այլ կերպ խոչնդոտեն կազմակերպության ծրագրերի իրականացմանը:

3. Սույն կարգին համաձայն կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքով երրորդ անձանց մատուցվող ծառայությունների ժամկետները որոշվում են Կազմակերկության և տվյալ անձանց միջև կնքվող պայմանագրերով, իսկ սակագները՝ հետևյալ բանաձևով՝

$$\text{Ծu} = (\text{ՏԳԱ}/30 + \text{ՍԱ} + \text{Պծ} + \text{ԱԱ}/25) \times 1.2$$

որտեղ՝

Ծu - ն ծառայությունների մատուցման 1 (մեկ) օրվա սակագինն է,

ՏԳԱ - ն ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տարածքի ամսական վարձակալության գնահատված արժեքն է, որն որոշվում է որակավորում ունեցող անկախ

գնահատողի կողմից գնահատմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

ՍԱ - ն ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող սարքավորումների օգտագործման արժեքն է, որը որոշվում է դրանց հաշվեկշռային արժեքի 10 տոկոսը հարաբերելով 365-ի,

ՊԾ - ն ծառայությունների մատուցման պահպանման ծախսն է, որը որոշվում է Կազմակերպության տարեկան պահպանման վերջին երեք տարվա ծախսերի (Էներգետիկ ծառայություններ, Կոմունալ ծառայություններ, Կապի ծառայություններ Անվտանգության ծառայություն, Ջեռուցման համակարգի սպասարկման ծառայություն, Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում, Կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածներով իրականացված ծախսերի հանրագումար) միջին թիվը հարաբերելով 312-ի,

ԱԱ - ն ծառայությունների մատուցմանն ընդգրկված աշխատողների ամսական հաշվարկային աշխատավարձի մեծություն է:

4. Սույն կարգի 3–րդ կետով հաշվարկված ծառայությունների մատուցման 1 (մեկ) օրվա սակագնի նկատմամբ սահմանվում են հետևյալ ուղղիչ գործակիցները՝

1) նախապատրաստական աշխատանքների և փորձերի օրերի համար՝ 0,5-0,7 գործակիցը (կախված նախապատրաստական աշխատանքների և փորձերի ժամանակ օգտագործվող ռեսուրսների ծավալից),

2) նախապատրաստական աշխատանքների և փորձերի 1 (մեկ) օրվա ընթացքում տևողությունը 4 ժամից պակաս լինելու դեպքում՝ նաև 0,5 գործակիցը,

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող Նախարարության միջնորդությամբ իրականացվող կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների, ինչպես նաև Նախարարության ֆինանսավորմամբ գործող Կազմակերպությունների համար՝ 0,5-ից 1,0 գործակիցը,

(փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.04.2021թ. N 414-Ա հրաման)

4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող, առանց Նախարարության միջնորդության իրականացվող կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների, ինչպես նաև Նախարարության ֆինանսավորմամբ գործող Կազմակերպությունների համար՝ 1,0 գործակիցը,

(փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2021թ. N 359-Ա հրաման)

5) այլ աղբյուրներից ֆինանսավորվող կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների համար՝ նվազագույնը 1,2 գործակիցը,

6) բարեգործական կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների համար՝ Նախարարության միջնորդությամբ 0,5-ից 1,0 գործակիցը,

7) հանրապետական նշանակության, կարևոր մշակութային միջոցառումների, մշակույթի ոլորտում պետական քաղաքականության տրամաբանությունից բխող միջոցառումների, ինչպես նաև հատուկ այլ դեպքերի համար՝ մինչև 0,5 գործակիցը:

(փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2021թ. N 359-Ա, 07.04.2021թ. N 414-Ա հրամաններ)

8) մանկական, երիտասարդական և դեբյուտային կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների համար՝ 0,7 գործակիցը:

(փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.04.2021թ. N 414-Ա հրաման)

5. Սույն կարգի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված գործակիցների կիրառման համար դիմումի /գրության/ առկայության դեպքում Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը ուսումնասիրում է ներկայացված ծրագիրը և առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր եզրակացությունը միջոցառման նշանակալիության և կարևորության մասին, ինչպես նաև գնահատական սակագների նկատմամբ կիրառելի գործակցի վերաբերյալ, որը Նախարարությունը համապատասխան գրությամբ տրամադրում է դիմողին և Կազմակերպությանը:

5.1. Սույն կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված գործակցի կիրառման համար դիմումի /գրության/ առկայության դեպքում Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը ուսումնասիրում է ներկայացված ծրագիրը և առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր եզրակացությունը միջոցառման նշանակալիության և կարևորության մասին, ինչպես նաև գնահատական սակագների նկատմամբ կիրառելի գործակցի վերաբերյալ: Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը նախապատրաստում և Նախարարի ստորագրմանն է ներկայացնում տվյալ գործակիցը կիրառելու մասին համապատասխան հրամանի նախագիծ:

(փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2021թ. N 359-Ա հրաման)

6. Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տարածքի ամսական վարձակալության գնահատված արժեքը (**ՏԳԱ** – ն) որոշելու համար Կազմակերպությունը առնվազն երեք տարին մեկ անգամ, դիմում է որակավորում ունեցող անկախ գնահատողի:

7. Սույն կարգով հաշվարկված սակագները մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը հաստատվում են Կազմակերպության ղեկավարի հրամանով (համաձայնեցվելով Նախարարության հետ), որի ստորագրումից հետո պատճենը 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է տրամադրվի Նախարարությանը, ինչպես նաև հրապարակվի կազմակերպության էլեկտրոնային կայք-էջում:

8. Մինչև սույն կարգի 7-րդ կետով նախատեսված սակագների հաստատումը որպես ծառայությունների մատուցման 1 (մեկ) օրվա սակագին (**Ծս**) է ընդունվում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանով սահմանված Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի իրականացման համար տրամադրվող մեկ օրվա վարձավճարի մեծությունները՝ վերջինիս համար կիրառելով սույն կարգի 4-րդ կետով սահմանված ուղղիչ գործակիցները:

9. Սույն կարգին համաձայն կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար երրորդ անձանց Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի օգտագործման հանձնելու և այդ գույքով երրորդ անձանց ծառայություններ մատուցելու նպատակով Կազմակերպությունը երրորդ անձանց հետ կնքում է

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ձևին համապատասխան պայմանագիր և մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը տարվա ընթացքում կնքված պայմանագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացնում Նախարարություն:

10. Կազմակերպությունն իրավունք ունի կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար երրորդ անձանց Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի օգտագործման հանձնելու և այդ գույքով երրորդ անձանց ծառայություններ մատուցելու նպատակով սույն կարգին համաձայն կնքվող պայմանագրերում ներառել գործող օրենսդրությամբ և Կազմակերպության կանոնադրությամբ թույլատրվող լրացուցիչ ծառայություններ՝ ինքնուրույն (երրորդ անձանց հետ համաձայնեցնելով) սահմանելով դրանց ժամկետները, գինը և դրանց վերաբերող այլ դրույթներ:

11. Սահմանել, որ.

1) մինչև ծառայությունների մատուցումը Կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուից պահանջել միջոցառման սցենարը կամ ծրագիրը կամ ընթացակագը, որը համարվելու է ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը,

2) Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքով երրորդ անձանց ծառայություններ մատուցումը չի կարող իրականացվել այնպիսի միջոցառումների կազմակերպման համար, որոնց ընթացքում կարող են խախտվել ՀՀ Սահմանադրության կամ այլ իրավական ակտերի պահանջները:

Հավելված N 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի փետրվարի 24-ի N213-Ա հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ
ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄ ԹԱՏԵՐԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅԱՄԱՆԳՐԻ

ք. ---------- ----- ---------- 20 թ.

---------- պետական որ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն ------ --------- ----------ի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ----------
---------- ը, ի դեմս տնօրեն ---------- ---------- ի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից միասին (այսուհետ՝ Կողմեր), ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխի, Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման 13-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի ---- ի N ---- Լ հրամանին համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է վճարի դիմաց Պատվիրատուին մատուցել հատևյալ ծառայությունները՝

1.1.1. Պատվիրատուի կողմից ----- ---------- 20 թ.-ին ժամը ---------- ին իրականացվող միջոցառման կազմակերպման նպատակով ծառայությունների մատուցում, որն իր մեջ ներառում է --------- նստատեղով պատշաճ դահլիճում հանդիսատեսի սպասարկում, Կատարողի դատարկ բեմում Պատվիրատուի կողմից միջոցառման կատարման ապահովում, բեմական ընդհանուր տարածքի լուսավորության, առկա ձայնային սարքավորումների ծառայությունների, անվտանգության, մուտքի վերահսկողության, մաքրման, օդաորակման ծառայությունների մատուցում, բեմական հանդերձարանների ու դիմահարդարման սենյակների տրամադրում:

1.1.2. Միջոցառումից բացի միջոցառման նախապատրաստական աշխատանքների կամ փորձերի (այսուհետ՝ նախապատրաստական աշխատանքներ) համար Կատարողին կտրամադրվեն բեմ, բեմական ընդհանուր տարածքի համապատասխան լուսավորություն, առկա ձայնային սարքավորումների ծառայություններ, անվտանգության, մուտքի վերահսկողություն, հանդերձարանային, մաքրման, օդաորակման ծառայությունների մատուցում, բեմական հանդերձարանների ու դիմահարդարման սենյակների տրամադրում ----- ---------- 20 թ.-ին ժամը ----------ից մինչև ---------- ը,

----- ---------- 20 թ.-ին ժամը ----------ից մինչև ---------- ը,

----- ---------- 20 թ.-ին ժամը ----------ից մինչև ---------- ը,

որոնց մասնակցելու իրավունք ունեն միայն Պատվիրատուի կողմից ներկայացված ցանկում նշված անձինք:

1.1.3. ----------

---------- (լրացուցիչ ծառայություններ՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ)

1.2. Հանդիսատեսի մուտքը Կատարողի տարածք թույլատրվելու է միջոցառումից ---------- րոպե առաջ միայն տոմսերով և հրավիրատոմսերով: Հանդիսատեսը Կատարողի տարածք չի կարող բերել օրենքով, իրավական ակտերով կամ Կատարողի ներքին իրավական ակտերով արգելված գույք:

1.3. Միջոցառման համար նախատեսված հրավիրատոմսերը, տոմսերը պատրաստելու է Պատվիրատուն՝ համաձայնեցնելով Կատարողի հետ:

1.4. Միջոցառման ժամանակ Պատվիրատուի կողմից իրականացվելու են աշխատանքներ համաձայն Պատվիրատուի սցենարի կամ սահմանված կարգի կամ ծրագրի (այսուհետ՝ սցենար), որի սեղմագիրը տրվելու է Կատարողին՝ ոչ ուշ քան հիմնական միջոցառման օրվանը նախորդող օրը՝ ժամը -------- ը:

1.5. Միջոցառումն ավարտվել է ժամը ------- ին: Հանդիսատեսը և մասնակիցները պետք է դուրս գան Կատարողի տարածքից մինչև ժամը ------- ը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2. Ծառայությունները մատուցել սույն պայմանագով նախատեսված կարգով, ժամկետում ու ծավալով,

2.1.3. Ծառայությունները մատուցել Կատարողի աշխատակիցների, ինչպես նաև ներգրավված այլ անձանց միջով,

2.1.4. Եթե Կատարողը հարգելի պատճառներով չի կարողանալու սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում, կարգով կամ ծավալով մատուցել համապատասխան ծառայությունը, ապա նա պարտավոր է այդ մասին ոչ ուշ քան ---------- օր առաջ հայտնել Պատվիրատուին:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Ծառայությունները մատուցելուց հետո Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 3.1. կետում նշված պայմանագրի գինը,

2.2.2. Կատարողի տարածքում անվտանգության ապահովման նպատակով տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց ստուգել, որպեսզի Կատարողի տարածք չբերվեն օրենքով, իրավական այլ ակտերով կամ Կազմակերպչի ներքին իրավական ակտերով արգելված գույք,

2.2.3. Կատարողի տարածքից հարկադիր դուրս հանել այն անձանց, որոնք խախտել են ՀՀ օրենսդրության, Կատարողի ներքին իրավական ակտերի պահանջները կամ խախտել են հասարակական կարգը կամ համակեցության կանոնները կամ սույն պայմանագրի պահանջները,

2.2.4. Կատարողի տարածքում անվտանգության նպատակով Կատարողն իրավունք ունի իր տարածքի ընդհանուր օգտագործման մասերում՝ դահլիճներ, բեմեր, միջանցքներ, աստիճանավանդակներ, ուսումնական կամ ընդհանուր պարապմունքի սենյակներ,

պահեստային մասեր, իրականացնել տեսանկարահանումներ, ձայնագրումներ, լուսանկարահանումներ, որոնք կարող են օգտագործվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև Կատարողի ծառայությունների գովազդման նպատակով,

2.2.5. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, եթե Պատվիրատուն սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված Ծառայության վճարը,

2.2.6. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը և հրաժարվել սույն պայմանագրի կատարումից ցանկացած պահի կամ ցանկացած պահի դադարեցնել միջոցառումը, եթե պարզում է, որ միջոցառումով կամ դրա որևէ մասով խախտվելու են ՀՀ Սահմանադրության կամ օրենսդրության կամ այլ իրավական ակտերի պահանջները կամ վտանգ են ներկայացնելու պետական անվտանգությանը, հասարակական կարգին, անձանց առողջությանը և բարոյականությանը կամ այլոց պատվին ու բարի համբավին կամ, եթե միջոցառման մեջ առկա է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու որևէ մեկ դրվագ: Սույն հիմքով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է հատուցել դրա հետևանքով Կատարողի բոլոր վնասները:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Մատուցվելիք ծառայություններում նախատեսվող փոփոխությունների մասին ոչ ուշ քան Ծառայությունները մատուցելու օրվանից ---------- օր առաջ գրավոր հայտնել Կատարողին,

2.3.2. Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գնին համապատասխան,

2.3.3. Ապահովել, որ իր ներկայացուցիչների, միջոցառման կազմակերիչների ու հանդիսատեսի կողմից պահպանվեն ՀՀ օրենսդրության, հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ, համակեցության կանոնները, Կատարողի տարածքում գտնվելու Կատարողի ներքին իրավական ակտերի կանոնները, ինչպես նաև սույն պայմանագրով նրանց համար նախատեսված պահանջները,

2.3.4. Սույն պայմանագրի միջոցառման մասնակիցների կամ հանդիսատեսի համար նախատեսված պահաջներին նախօրոք տեղեկացնել միջոցառման մասնակիցներին և հանդիսատեսին:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.4.2. Չվճարել իրեն չմատուցված ծառայությունների համար,

2.4.3. Միջոցառման կազմակերպման նպատակով Կատարողի տարածք բերել շարժական գույք, որի ցանկը համաձայնեցվում է Կատարողի հետ: Կատարողի տարածք չի կարող բերվել այն շարժական գույքը, որը կարող է վնաս պատճառել անձանց կյանքին կամ առողջությանը կամ գույքին, ինչպես նաև Կատարողի գույքին: Կատարողի տարածք չի կարող բերվել օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված գույք,

2.4.4. Միջոցառման ժամանակ իրականացնել միջոցառման տեսանկարահանումներ, լուսանկարահանումներ կամ ձայնագրություններ,

2.4.5. Միջոցառման կազմակերպմանը ներգրավել այլ կազմակերպությունների կամ անձանց, որոնց ցանկն ու իրականացվող գործառույթների մասին նախօրոք պետք է գրավոր տեղեկացվի Կատարողը,

2.4.6. Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Կատարողը խախտել է սույն պայմանագրի պահանջների, որի հետևանքով Պատվիրատուն չի կարողանա իրականացնել իր սցենարը:

3. Պայմանագրի գինը, հաշվարկների կարգը և վճարման ժամկետը

3.1. Պատվիրատուն պայմանագրով մատուցվող Ծառայության համար Կատարողին վճարում է ---------- հազ. ՀՀ դրամ, ներառյալ բոլոր տեսակի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

3.2. Մատուցվող Ծառայության համար վճարումը պետք է կատարվի ----------:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետները Կատարողի կողմից խախտելու դեպքում՝ Պատվիրատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 %-ի չափով:

4.2. Կատարողի կողմից տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից, եթե կատարողն ունի նման հնարավորություն:

4.3. Սույն պայմանագրի 3.2-րդ կետում նշված վճարման ժամկետը Պատվիրատուի կողմից խախտելու դեպքում՝ Կատարողին վճարում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 %-ի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.1 %-ի չափով:

4.4. Պատվիրատուի կողմից տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

4.5. Միջոցառման ընթացքում Պատվիրատուի կամ Պատվիրատուի մասնակիցների կամ հանդիսատեսի կողմից Կատարողին հասցված բոլոր վնասների հատուցման պարտականությունը կրում է Պատվիրատուն:

4.6. Եթե Պատվիրատուի կողմից միջոցառման ժամանակ խախտվեն սույն պայմանագրի 2.3-րդ կետի պահանջները, ապա Կատարողը դրա համար չի կրում որևէ պատասխանատվություն, իսկ Պատվիրատուն պարտավոր է հատուցել դրա հետևանքով Կատարողին հասցված վնասները, ինչպես նաև վճարել տույժ ---------- չափով:

4.7. Եթե Պատվիրատուի մեղքով Պատվիրատուն վաղաժամկետ լուծում է սույն պայմանագիրը, ապա Պատվիրատուն պարտավոր է հատուցել դրա հետևանքով Կատորողին հասցված վնասները:

5. Անհաղթահարելի ուժ (Ֆորս Մաժոր)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Կատարողն ազատվում է սույն պայմանագրի չկատարման համար պատասխանատվությունից, եթե պայմանագիրը կնքելուց հետո սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարման համար նախատեսված ժամկետում, Կատարողն իր վերադաս մարմինների պահանջով կամ պետական կամ միջազգային միջոցառումների կատարման ապահովման նպատակով պետք է իրականացնի միջոցառում: Այս դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուին աջառարկի ծառայությունների մատուցման այլ ժամկետներ:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից ու գործում է մինչև կողմերի կողմից իրենց պարտականությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից,

7.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի 1 (մեկ) օրինակը մնում է Կատարողի մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Պատվիրատուին:

8. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	Պատվիրատու